ԻՆՆԵՐՈՐԴ ՄԱՍ

Դ. ԴԱՐԲԱՆԴ ՔԱՂԱՔ

1889 թուի հոկտեմբեր ամսին առաջնորդական պաշտօնով Դարբանդ գընացած միջոցին յայցելութիւն ժողովրդոց, այսպէս տեսի Դարբանդը և դարբանդցւոց։ Դարբանդ քաղաքը հնումն դուռն երկաթի, դուռն Ալանաց, դուռն Հոնաց, և դուռն Ճորայ (այժմ Զուրայ) անուններըը կրելով՝ նշանաւոր է պատմութեան մէջ և միանգամայն սահմանապլուխ էր Աղուանից և Ալանաց աշխարհաց, որը և բերդապարսպով շինուած է Կասպից ծովի եղերքին, որոյ հարաւային հանդէպը բացւում է Վատնեան դաշտը, ուր նահատակուել է Ս. Գրիգորիս Աղուանից Ա. կաթուղիկոսը՝ թոռն մեր Լուսաւորչին։

Քաղաքիս պարիսպները սկսուած են լեռան բարձրութիւնից և. հետզհետէ ցածանալով և յառաջ գնալով՝ հասել են մինչեւ ծովը, և ինչպէս ասացին նաւավարք, բաւական եւս ծովի մէջն են գնացել։ Պարիսպները ունին մեծ և պինդ 88 բրգեր և աշտարակներ, և երկու մեծ երկաթապատ դռներ, որոյ անունովը և քաղաքս երբեմն կոչւել է Դամիր — դափի, և տասն փոքր դռներ։ Պարսպի երկայնութիւնը սարից մինչեւ ծովը 600 սաժէն է, իսկ լայնութիւնը մի պատից միւս պատը՝ 300 սաժէն, և այս պարսպի մէջ են բնակւում Հայք 150 տուն, իսկ Հրէայք և Մահմետականք և ուրիշ ազգեր՝ Ռուս, Մալական, և Լեզկի 3000ի չափ, և բոլորը պարապում են առեւտրով և արհեստով։ Քաղաքի ներքին կողմումն է ծովեղերքին՝ Ռուսաց տէրութեան բարեկարգիչ և վերանորոգիչ Կայսեր Մեծին Պետրոսի ժամա-